

Ի Վ Ա Ն Թ ՈՒՐ Կ Ե Ն Ե Վ

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ը

Այս այն է, ինչ որ կարգացի մի հին
խալական ձեռագրում:

Ա.

Տամսեւի եցերորդ դարի գրեթէ մի-
ջում, Ֆերրարայում, (այդ ժամանակ սա-
ծաղկում էր մականի ներքոյ իր մեծա-
գործ արքիպուքաների, որ պաշտպան էին
գեղարուեստների եւ բանաստեղծութեան),
ապրում էին երկու երիտասարդներ, Ֆա-
բիո եւ Մուծծիօ անունով: Նրանք միեւ-
նոյն տարիքից, եւ մերձաւոր ազգական
էին, ու հազիւ թէ երբ եւ է բաժանուած.
մի ամենաջերմ գուրգուրանք, մանկու-
թեան օրերից միացրել էր նրանց: Նրանց
յարեւմտեան դիրքը ամրապնդել էր այդ-
կապը: Երկուքն էլ պատկանում էին հին
գերդաստանների. երկուքն էլ հարուստ
էին, անկախ, եւ առանց ընտանեկան կա-
պանքների. երկուսի մէջ էլ ճաշակն ու
հակումները համամասն էին:

Մուծծիօն հուրումնաւոր էր երաժշտու-
թեան, Ֆաբիօն՝ նկարչութեան:

Ամբողջ Ֆերրարայում նրանց վրայ
հղարտութեամբ էին հայում, որպէս զար-
գարանքներ արքունիքին, ընկերութեան եւ
քաղաքին: Սակայն, այսու ամենայնիւ, ե-
րեւոյթով նրանք միմեանց չէին նմանում,
թէ եւ երկուքն էլ նշանաւոր էին մի շնոր-
հալի եւ առողջ գեղեցկութիւնով:

Ֆաբիօն բարձրահասակ էր, բացօդոյն
դէմքով, մուշի գոյն մազերով եւ կապոյտ
աչքերով:

Մուծծիօն, ընդհակառակն, ունէր թուխ
դէմք, սեւ մազեր, եւ իր մութ շագանա-
գոյն աչքերում չկար գուարթ պայծառու-
թիւնը, եւ ոչ էլ իր շրթներում՝ հաճելի
ժպիտը Ֆաբիօի: Նրա խիտ յօնքերը դուրս
ցցուած էին նրա նեղ կոպերի վերեւից, այն
ինչ Ֆաբիօի ոսկեգոյն արտեւանունքները
կազմում էին հուրը կիսաշրջանակ իր մա-
քուր ողորկ յօնքերի ներքեւ: Խօսակցու-
թեան մէջ եւս, Մուծծիօն հուսալ ոգեւոր-
եալ էր:

Այդ բոլորի համար, երկու բարեկամ-
ներն էլ նոյնքան նպաստաւոր սպա-
ւորութիւն էին գործում տիկիւնների վրայ՝
որպէս տիպարներ առպետական քաղաքա-
վարութեան ու վեհանձնութեան:

Միեւնոյն ժամանակ, Ֆերրարայում
ապրում էր մի ողջիկ, վալերիա անունով:
Նա համարում էր քաղաքի ամենաերե-
ւելի գեղեցկուհիներից մէկը. թէ եւ շատ
քիչ անգամ կարելի էր տեսնել նրան, ո-
րովհետեւ նա ապրում էր մի առանձնա-
ցած կեանք եւ երբեք դուրս չէր ելնում,
բացի եկեղեցի գնալուց եւ մեծ տօնի օ-
րերին մի պոռոյտ կատարելուց: Նա ապրում

էր իր մօր հետ, մի ալրի կին՝ ազնուական ընտանիքից, թէեւ փոքրիկ հարստութիւնով, եւ որը ուրիշ գաւակ չունէր:

Ամէն նրանց որ հանդիպում էին վալերիային, նա ներշնչում էր ակամայ հիացման մի գեղացութիւն, եւ նոյնքան ակամայ խանգաղատանք եւ յարգանք, այնքան համեստ, այնքան գոյարիկ էր իր կերպարանքը: Կարծես թէ նա իրագեղ էր իր սեփական հմայքի բովանդակ ոյժին:

Ոմանք, ճշմարիտ է, գտնում էին նրան մի քիչ գունատ. նրա աչքերը, գրեթէ միշտ վալրահակ, արտայայտում էին մի սրուշ ամօթխածութիւն եւ նոյն իսկ երկշտութիւն: Նրա շրթները հազուադէպօրէն ժպտում էին, եւ այն էլ միայն նուազկող կերպով: Նրա ձայնը քիչ անգամ ո եւ է մէկը լսում էր: Բայց տարածայնուել էր, թէ նա շատ գեղեցիկ էր եւ թէ փակուած իր սեփական սենեակում, առաւօտ կանուխ, երբ տակաւին ամէն բան քաղաքում նիրհում էր, նա սիրում էր երգել հին երգեր ընկերակցութեամբ վինի որի վրայ երբեմն ինքն իսկ անձամբ նուագում էր:

Հակառակ իր գալիութեան՝ վալերիա ծաղկում էր առողջութեամբ, եւ նոյն իսկ ծերացած մարդիկ, որ նայում էին նրա վրայ, չէին կարող չմտածել. «Օ՛, ինչքան երջանիկ է լինելու այն երիտասարդը, որի համար այդ անարատ կոյս կոկոնը, տակաւին փակուած՝ իր թերթերի մէջ, պիտի մէկ օր բացուի ու դառնայ լիափթիթ ծաղիկ»:

Բ.

Ֆարիօն եւ Մուծծիօն տեսան վալերիային առաջին անգամ մի շքեղ հանրային հանդիսում որ արւում էր հռչակաւոր Լուկրեցիա Բորջիայի որդուն՝ Ֆերրարայի արքիւզուքս էրքօլի հրամանով ի պատիւ մի քանի մեծանուն ազնուականների, որոնք Փարիզից եկել էին հրուէրով արքիւքսուհուն որ գուտորն էր Ֆրանսայի թագաւոր Լուի

ժ.Բ.ի: Վալերիան հասել էր իր մօր կողքին, մի գեղափարթամ բեմի վրայ, որը կառուցուել էր Բալլադիոյի մի գծագրութեան համեմատ, Ֆերրարայի գլխաւոր հրապարակում, քաղաքի ամենապատուաւոր տիկիներին համար:

Ֆարիօն եւ Մուծծիօն, երկուսն էլ նոյն օրը խանգաղին կերպով սիրահարուեցան նրա վրայ. եւ բանդի բնաւ միմիանցից ո եւ է գաղտնիք չէին պահում, նրանցից իւրաքանչիւրը իսկոյն իրագեղ եղաւ թէ ի՞նչ էր անցնում իր բարեկամի սրբատում: Նրանք իրանց մէջ համաձայնուեցին, որ երկուսն էլ փորձեն ծանօթութիւն հաստատել վալերիայի հետ եւ եթէ նա շնորհ անէ ընտրել նրանցից մէկին, միւսը ենթարկուի նրա որոշումին՝ առանց մըրմունջի:

Մի քանի շաբաթ յետոյ, շնորհիւ այն գերազանց համբաւին որ նրանք արժանապէս վայելում էին, յաջողեցան մուտք գանել այրի կնոջ տունը, թէեւ գծուար էր այնտեղ մտնելու արտօնութիւն ստանալ. նա թոյլ տուաւ նրանց այցելել իրան:

Այդ ժամանակից սկսած նրանք կարողանում էին գրեթէ ամէն օր տեսնել վալերիային եւ խօսել նրա հետ. ու իւրաքանչիւր օր սէրն ու ցանկութիւնը երկու երիտասարդների սրտերում վառուելով աւելի եւ աւելի ուժեղանում էր: Վալերիան, այսու ամենաշնիւ, հախընտրութիւն ցոյց չտուեց նրանցից եւ ոչ մէկին, թէեւ նրանց ընկերութիւնը բացառապէս կերպով ախորժակի էր նրա համար:

Մուծծիօն հետ նա զբաղւում էր երաժշտութեամբ, բայց նա աւելի խօսում էր Ֆարիօնի հետ, նրա հետ նա նուազ երկչոտ էր:

Վերջապէս, նրանք որոշեցին միանգամ ընդ միշտ իմանալ իրանց բաղդը. եւ ուղարկելով մի համակ վալերիային, նրանք խնդրեցին նրանից, որ իրանց հետ պարզ լինի, եւ ասէ թէ որի՞ն նա պատրաստ է տալու իր ձեռքը:

Վալերիան ցոյց տուաւ այս համակը

իր մօրը, եւ յայտնեց նրան թէ ինք կամենում է մնալ ամուրի, բայց եթէ իր մայրը նկատում է որ ժամանակն է իր համար ամուսնանալու, ապա նա կ'ամուսնանայ որի հետ որ իր մայրը ընտրէ:

Այնիւ այրի կ'ընր մի քանի արցունք թափեց, մտածելով որ բաժանուելու էր իր սիրեցեալ զաւակից, սակայն, չկար մի բանաւոր պատճառ մերժելու նրա ձեռքն ուղղորդելն: Նա հաւաստւապէս երկուսին էլ համարում էր արժանի իր գտներ ամուսինը լինել: Բայց, որովհետեւ նա վաղա՛նապէս ընտրել էր Ֆաբիօն, եւ կասկածելով որ Վալերիան նրան աւելի շատ էր սիրում, նա ընտրեց նրան:

Յաջորդ օրը Ֆաբիօն իմացաւ իր բարեբաղդութիւնը, միջոցեւ Մուծծիօն մնում էր միայն պահել իր խօսքը եւ գլուխ ծռել:

Եւ նա այդ արեց: Բայց ակնաստես լինել իր բարեկամի եւ մրցակցի յաղթութեան, այդ աւելի ծանր էր քան ինչ որ կարող էր տանիլ: Նա իսկոյն ծախեց իր կալուածները մեծ մասը, եւ հաւաքելով մի քանի հազար գուհատ, որոշեց ճամբորդել գէղի հեռաւոր Արեւելքը: Երբ նա Ֆաբիօն հրաժեշտ տուեց, առաց նրան, որ ինք չի վերադառնալու մինչեւ որ զգայ թէ իր սիրոյ վերջին նշոյլն անհետացել է իր սրտում:

Ֆաբիօն համար կսկծալի էր բաժանուել իր մանկութեան եւ երիտասարդութեան օրերի բարեկամից... բայց բերկրալի նախաստեղծութիւնը մ'օտեցող երջանկութեան փութով կուլ տալ տուեց բոլոր միւս զգացողութիւնները, եւ նա ամբողջապէս անձնատուր եղաւ յաջող սիրոյ յաւերժականութեան: Քիչ յետոյ, նա Վալերիայի հետ տանեց իր սրակի արարողութիւնը, եւ միայն այն ժամանակ իմացաւ ամբողջ արժէքն այն գանձի որ իր բաղդն էր եղել ստանալ: Վալերիան ունէր մի զմայլելի ամարանոց, մի ստուերամած սրտաշողով, Ֆերբարայից քիչ հեռու: Նա իր կնոջ եւ մօր հետ փոխադրուեց այնտեղ:

Ապա, մի երջանկութեան շրջան սկսուեց նրանց համար:

Ամուսնական կեանքը մի նոր եւ հմայիչ լոյսի մէջ ի յայտ բերեց Վալերիայի բոլոր կատարելութիւնները:

Ֆաբիօն դարձաւ մի նշանաւոր արդիւտ, այլ եւս մի պարզ սիրող նկարիչ չէր, այլ մի իրական վարպետ:

Վալերիայի մայրը ցնծութեամբ շնորհակալութիւն էր յայտնում Աստուծուն երբ նայում էր երջանիկ զոյգի վրայ:

Չորս տարիներ անցան աննշմարելի կերպով, մի հեշտալի երազի նման: Միայն մէկ քանի կարօտում էր երիտասարդ զոյգը, մի պակասութիւն՝ որ ինչպէս մի վիշտ նրանց ողբալ էր տալիս: Նրանք զաւակ չունէին... բայց բոլորովին յոյսերնին կորած չէին:

Չորրորդ տարուայ վերջերը, վրայ հասաւ մի մեծ եւ իրական վիշտ, Վալերիայի մայրը մի քանի օրուայ հիւանդութիւնից յետոյ մեռաւ:

Վալերիան շատ արցունք թափեց, մի երկար ժամանակ նա չէր կարողանում ընտելանալ իր կորուստին:

Բայց մի տարի էլ անցաւ, կեանքը նորից հաստատել էր իր իրաւունքները, եւ հոսում էր իր հին ճամբով: Եւ ահա, մի գեղեցիկ ամառնային երեկոյ, ամենքի համար անսպասելիօրէն՝ Մուծծիօն վերադարձաւ Ֆերբարա:

Գ.

Ամբողջ հինգ տարուայ միջոցին, որ իր բաժանումից ի վեր անցել էր, ոչ ոք ոչինչ չէր լսել նրա մասին. ամէն խօսակցութիւն իր նկատմամբ մեռել էր, որպէս թէ նա անհետացած լինէր աշխարհի երեսից: Երբ որ Ֆաբիօն հանդիպեց իր բարեկամին Ֆերբարայի փողոցներից մէկում, գրեթէ բարձրաձայն աղաղակեց, նախ՝ վրդովմունքից, յետոյ ուրախութիւնից, ու իսկոյն եւեթ հրաւիրեց նրան իր ամարանոցը: Պատահեց, որ իր պտրտեղում, տա-

նից առանձին, գտնուում էր մի ընդարձակ տաղաւար. նա առաջարկեց իր բարեկամին հաստատուել իր այս տաղաւարում: Մուծծիօն իսկոյն համաձայնուեց եւ միեւնոյն օրը փոխադրուեց այնտեղ իր ծառայի հետ, մի համր, Մալայեցի, — համր՝ բայց ոչ խուլ, եւ արդարեւ, դասելով իր արտայայտութեան արթնութիւնից, նա մի խիստ ուշիմ մարդ էր...: Նրա լեզուն կտրուել էր: Մուծծիօն բերել էր իր հետ երկուսաս. նեակներով արկղներ, լեցուած ամէն տեսակ գանձերով, որոնք իր կողմից հաւաքուած էին իր երկար ճամբորդութեանց ընթացքում:

Վալերիան ուրախացաւ Մուծծիօի վերադարձին համար: Մուծծիօն ողջունեց նրան զուարթագին բարեկամական զգացումներով, բայց հանդարտութեամբ. նրա ամէն մի շարժումից կարելի էր տեսնել, որ նա պահել էր ֆաբիօին տուած իր խոստումը:

Օրուայ միջոցում նա կատարելապէս ամէն բան դասաւորելով տաղաւարը կարգի դրեց, իր Մալայեցիին օգնութեամբ. նա բաց արեց հեաքքըքական առարկաները, որ բերել էր իր հետ, գորգեր, մետաքսեայ նիւթեր, թաւշեղէն ու ասեղնագործուած զգեստներ, գէնքեր, բաժակներ, սնակներ, թասեր, կիսուածանկարներով զարդարուած, իրեր՝ ոսկուց եւ արծաթից, մարգարիտներով եւ պերուզակներով ճոխացած. քանդակուած արկղիկներ յասկիսից եւ փղոսկրից. կտրուած սրուակներ, շիշեր, համեմներ, խունկեր, վայրի գազանների մորթեր, անձանօթ թռչունների փետուրներ, եւ բազմաթիւ ուրիշ թանկագին բաներ, որոնց բուն գործածութիւնը թւում էր խորհրդաւոր եւ անըմբռնելի:

Այս բոլոր թանկագին իրերի մէջ գտնուում էր մի հարուստ մարգարտեայ մանեակ, նուիրուած Մուծծիօին Պարսից թագաւորի կողմից, իր մի ինչ որ գաղանի մեծ ծառայութեան համար: Նա վալերիայից արտօնութիւն խնդրեց, որ այդ մանեակը իր սեփական ձեռներով նրա վրից

կախէ: Նա զգաց որ մանեակը շատ ծանր էր եւ նրա մէջ կար մի տարօրինակ ջերմութիւն... թւում էր թէ նա այրում էր իր մորթը: Երեկոյին, ընթրիքից յետոյ, երբ նրանք նստել էին ամարանոցի պատշգաւում, տառերալից դավնեծաղիկների եւ սարգենիների հովանու տակ, Մուծծիօն սկսեց պատմել իր արկածները: Նա պատմեց հեռաւոր երկիրների մասին, որ տեսել էր, ամպամած կառարներով լեռների եւ անապատների, ծովաման գետերի մասին: Նա պատմեց լայնածաւալ շէնքերի և տաճարների, հազարամեայ ծառերի, ծիածառային երանգներով թռչունների եւ ծաղիկների մասին:

Նա յիշատակեց այն քաղաքներն եւ ժողովուրդներն որոնց այցելել էր... նրանց անուններն իսկ մի դիւթական պատմութեան նման էին: Ամբողջ Արեւելքը ընտանի էր Մուծծիօին: Նա ճամբորդել էր Պարսկաստան, Արապիստան, ուրտեղ ձիերը ագնիւ եւ աւելի գեղեցիկ են քան ո եւ է ապրող արարածներ: Նա թափանցել էր Հնդկաստանի մինչեւ սիրտը, ուրտեղ մարդկային ցեղը աճում է վեհաշուք ծառերի նման: Նա հասել էր Չինաստանի եւ թիբեթի սահմանները ուրտեղ կենդանի աստուածը, Մեծ Լամա կոչուած, աշխարհի վրայ տարում է նեղ աչքերով մի լուռ մարդու դիմակի տակ:

Հրաշալի էին իր պատմութիւնները: Ֆաբիօն եւ վալերիան, երկուսն էլ, հմայուած՝ լսում էին նրան: Մուծծիօի կերպարանքը իրապէս շատ քիչ փոխուել էր. նրա գէմքը մանկութիւնից թխադոյն լինելով, աւելի եւս թխացել ու այրուել էր մի աւելի կիզիչ արեւի ճառագայթների տակ: Իր աչքերը՝ երեւում էր որ աւելի խոր ընկած էին քան առաջ, եւ այդքան էր միայն փոփոխութիւնը, բայց իր գէմքի արտայայտութիւնը տարբեր երեւոյթ էր ստացել. կեդրոնացել եւ ագնուացել էր: Եւ երբեք աւելի կենդանութիւն ցոյց չէր տալիս, քան երբ նա վերջիշում էր այն վտանգները, որոնց գիշերները պատահել

էր անատաներում, ուր արձագանգում էին վազրերի մոնչիւնները, եւ կամ օրուայ մէջ ամայի ճանապարհներում՝ ուր վայրենի ֆանատիկոսներ դարանակալ սպասում էին ճամբորդներին՝ սպաննելու համար նրանց. ի պատիւ իրանց երկաթեայ աստուածուհուն, որը պահանջում է մարդկային զոհեր:

Եւ Մուծծիօի ձայնը աճել եւ աւելի խորացել էր. իր ձեռները, իր ամբողջ մարմինը կորցրել էր համարձակ շարժումը, որ մասնաշատուկ է իտալական ցեղին: Օգնութեամբ իր ծառայի, խոնարհամիտ, արթուն Մալայեցուն, նա ցոյց տուեց իր հիւրերին մի երկու ձեռնածութիւններ, որ ինք ստիւրել էր Հնդիկ Բրահմիններից: Այսպէս, օրինակի համար, սկզբում ինքնիրան թաղցնում էր մի վարագոյրի ետեւ, եւ ապա յանկարծակի երեւում էր նստած օդում, ոտքերը ծալապատիկ, իր մասների ծայրով թեթեւօրէն սեղմելով հրնդկական եղեգից մի գաւազան՝ ուղղահայեաց դիրքում դրուած. որը ոչ սակաւ ապշեցրել էր Ֆաբիօն ու գրականապէս ահաբեկել Վալերիային... «Միթէ՞ նա մի կախարդ չէ», մտածում էր նա: Երբ որ նա շարունակելով սուլում էր մի փոքրիկ սրինգի վրայ, դուրս կանչելու համար բնականաբար օձերի՝ ծածկուած մի կողովի մէջ, ուրտեղից նրանց թխապօյն, տախակ գլուխները սարսափնապ լեզուներով երեւում էին մի մասնաշատուկ գունաւոր ծածկոցի ներքոյ, Վալերիան ապաստիւհար լինելով՝ խնդրեց Մուծծիօից, որ, ինչքան կարելի է, շուտով մէկ կողմ դնէ այդ գլուխի արարածները:

Ընթրիքի ժամանակ, Մուծծիօն հրամայուց իր բարեկամներին Շիրազի գինի՝ մի կլոր, երկարավիզ սրուակով: Դա մի արտաքոյ կարգի բոյր եւ թանձրութիւն ունէր, մի ոսկեղէն գոյն՝ իր մէջ մի կանաչ շուքով եւ փայլում էր մի տարօրինակ պայծառութեամբ, երբ որ թափուում էր մանրիկ յասպիս բաժակներում: Համով տարբերում էր եւրոպական գինիներից,

շատ քաղցր եւ հոտաւէտ էր. և խմելով կամաց, փոքր ումպերով, առաջացնում էր մի հաճելի թմրութիւն բոլոր անդամներում:

Մուծծիօն Ֆաբիօն եւ Վալերիային խմցրեց մի բաժակ այդ գինուց, եւ մի բաժակ էլ ինք խմեց: Ծնելով վար իր բաժակը, նա ինչ որ բան մըմնջաց, ու շարժեց իր մասները. Վալերիան այդ նկատեց: Բայց Մուծծիօի բոլոր կատարածներում, ամբողջ կենցաղում, մի ինչ որ սովորականից դուրս, օտարոտի բան կար: Վալերիան մտածում էր. «Նա կարող էր որդեգրած լինել մի ինչ որ նոր հաւատք Հնդկաստանում, եւ կամ արդեօք այդ այնպիսի սովորութիւնն էր»: Ապա, մի կտրճ լուրժիւնից յետոյ, նա հարցրեց նրան. «Ճամբորդութեան միջոցում պահել է իր սէրը երաժշտութեան:»

Մուծծիօն, պատասխանելով՝ հրամայեց Մալայեցուն բերել էր հնդկական ջութակը. այդ ջութակը, այժմեան մեզ ծանօթ ջութակների նման էր, բայց, փոխանակ չորս լարերի, նա ունէր միայն երեք. վերեւի մասը ծածկուած էր մի կապտաւոյն օձի մորթով, եւ եղեգեայ բարակ աղեղը կիտալումնի ձեւով էր. նրա ծայրագոյն եզրում փայլում էր մի սրածայր ագամանդ:

Մուծծիօն նախ նուագեց մի քիչ արխուր եղանակներ, ազգային երգեր, ինչպէս ինքն էր անուանում նրանց, որ տարօրինակ եւ նոյն իսկ բարբարոսական էին թւում իտալական ականջին: Մետաղային լարերի ձայնի հնչումը ողբազին եւ թոյլ էր, բայց երբ Մուծծիօն սկսեց վերջին երգը, գործիքը յանկարծ մի նոր ուժ ստացաւ եւ հնչեց ներդաշնակութեամբ եւ զօրեղութեամբ: Խանդաբորբոք մեղեդին հոսում էր աղեղի լայն հարուածների ներքոյ, հեշտագոյն օրէն գալարուելով ու կծկուելով ճիշդ օձին նման, որ փաթաթուել էր ջութակի կատարը: Եւ այնպիսի՝ կրակ, այնպիսի՝ յաղթական երանուելիւն ցոլանում եւ այրում էր այդ մե-

ղեղու մէջ, որ Ֆաբիոն եւ Վալերիան իրանց սրտի ճմլուիլն զգացին եւ լաց եղան... մինչդեռ Մուծծիօն, գլուխը խոնարհած, եւ սերտ վարած ջութակին, այսօրը գունատ, յօնքերը իրարու մօտեցած ու միակ ուղիղ գիծ կազմած, աւելի ևս ինքն իր մէջ կեդրոնացած և հանդիսաւոր էր երեւում: Եւ աղեղի ծայրում գտնուած աղամանքը լոյսի կայծեր էր արձակում—կարծես թէ այն էլ վառւում էր երկնային երգի կրակով: Երբ որ Մուծծիօն վերջացրեց, և տակաւին ջութակը ամուր բռնած իր ծնօտի եւ ուսի մէջսեղում, վար ձգեց իր ձեռքը, որ բռնել էր աղեղը, «Ի՞նչ էր այդ, ի՞նչ էր այդ որ նուագեցիք մեզ համար», աղաղակեց Ֆաբիոն: Վալերիան ոչ մի խօսք չարտասանեց—բայց նրա ամբողջ էութիւնը՝ երեւում էր որ արձագանգում էր իր ամուսնու հարցմանը: Մուծծիօն դրա ջութակը սեղանին վրայ— և թեթեւ կերպով իր մագերը դէպի ետեւ նետելով, պատասխանեց մի քաղաքավարի ժպիտով. «Այդ մեղեդին, այդ երգը, ես մի անգամ լսեցի Սէյլանի կղզում»:

«Այդ երգը, այնտեղ, մարդկանց մէջ, ծանօթ է, իբր երգը երջանիկ, յաղթական սիրոյ»: «Նուագի՛ր այդ նորից», Ֆաբիոն մրմնջում էր: «Ո՛չ, նա այլ եւս չի կարելի նուագուել», պատասխանեց Մուծծիօն: «Բաց ի դրանից, այժմ շատ ուշ է: Սինեօ-

րա Վալերիան պէտք է որ հանգստանայ, եւ ժամանակն է, որ ես էլ հանգստանամ... Ես յղենել եմ...»:

Ամբողջ օրուայ միջոցում, Մուծծիօն Վալերիայի հետ յարգանքով եւ պարզութիւնով վարուեց, որպէս նախկին օրերի բարեկամ, բայց երբ դուրս գնաց, նա սեղմեց նրա ձեռքը շատ պինդ, ճզմելով նրա մասնները իր ափի մէջ, եւ այնքան ուշադրութեամբ նայելով նրա երեսին որ թէեւ նա իր արտեւանութիւնները չբարձրացրեց, սակայն եւ այնպէս նա զգաց նրա նայուածքը իր յանկարծակի ալիւտ ալիւտ վրայ:

Նա ոչինչ չասեց Մուծծիօնին, բայց մէկ կողմ թօթալից իր ձեռքը, եւ երբ Մուծծիօն արդէն գնացել էր, ակնկառոյց կերպով նայեց դրանը, որից նա դուրս էր եկել: Յիշեց թէ ինչպէս ինքը մի քիչ վախենում էր նրանից, նոյն իսկ նախկին օրերում... և այժմ նա երկբայութիւնից նուաճում էր զգում իրան:

Մուծծիօն գնաց իր տաղաւարը, ամուսինն ու կինը գնացին իրանց ննջասենեակը:

Շիգակօ

Թարգմ. Պ. ՇէֆէրՋեԱն

(Շարունակելի)